

Հայցվորի  
անունը Փողոց  
Քաղաք, փոստ. ինդեքս

## Ծանուցում Զբաղվածության զարգացման վարչության հաճախորդի հաշվեհամարի մասին

Այս ծանուցագրով Ձեզ տրվում է Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD) հաճախորդի հաշվեհամար: EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը հարկավոր է UI Online-ում գրանցվելու համար և կարող է EDD-ի ներկայացուցչի հետ խոսելիս օգտագործվել սոցիալական ապահովության քարտի համարի փոխարեն:

UI Online<sup>SM</sup> համակարգն արագ, հարմար և ապահով միջոց է գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) հայցի վերաբերյալ մանրամասն տեղեկություններից օգտվելու, շարունակական նպաստների համար իրավունակությունը հաստատելու\*, ընթացիկ հայցը վերաբացելու, վճարումների պատմությունը դիտելու և հայցը կառավարելու համար ու գործում է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Որպես հավելյալ հարմարավետություն՝ UI Online Mobile<sup>SM</sup> ծառայություն է տրամադրվում սմարթֆոն և պլանշետ օգտագործողներին:

### Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարն է՝

1234567890

EDD-ն շատ լրջորեն է վերաբերվում գաղտնի տեղեկությունների անվտանգության հարցին: Ոչ մեկին մի հայտնեք Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը:

**Ավելի արագ ստացեք նպաստների վճարումները** Գրանցվեք UI Online համակարգում և ստացեք էլեկտրոնային ծանուցումներ, երբ գա իրավունակությունը հաստատելու ժամանակը: Միջին հաշվով՝ UI Online-ի միջոցով ներկայացված հաստատումներն ավելի արագ են մշակվում, քան թղթային տարբերակով կամ հեռախոսով ներկայացվածները:

UI Online հաշիվ բացելու համար կատարեք հետևյալ երեք քայլերը.

- 1. ստեղծեք** ապահով մուտքի տվյալներ Benefit Programs Online համակարգի միջոցով՝ այցելելով [www.edd.ca.gov/BPO](http://www.edd.ca.gov/BPO).
- 2. գրանցվեք** UI Online-ում՝ օգտագործելով Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը.
- 3. մուտք գործեք** UI Online կամ UI Online Mobile համակարգ Benefit Programs Online-ի միջոցով, որպեսզի հաստատեք նպաստներ ստանալու իրավունակությունը և այլն:

UI Online համակարգից առավելագույնս օգտվելու համար տրամադրվում են մի քանի գործիքներ, այդ թվում՝ *UI Online<sup>SM</sup> User Guide*, DE 2338G, (UI Online<sup>SM</sup> օգտագործողի ուղեցույց). հաճախ տրվող հարցեր (ՀՏՀ) և տեսաձեռնարկներ, որոնք հասանելի են [www.edd.ca.gov/UI\\_Online](http://www.edd.ca.gov/UI_Online) կայքէջում:

**Մի հապաղեք: Ստեղծեք Ձեր հաշիվն այսօր և օգտվեք UI Online համակարգի բազմաթիվ առավելություններից ու հարմարություններից:**

Եթե մուտքի տվյալներ արդեն ստեղծել եք Benefit Programs Online համակարգի միջոցով և գրանցվել եք UI Online հաշվի համար, ապա կարող եք անտեսել այս ծանուցագիրը:

\* Մասնակի կամ Աշխատանքի բաշխման ծրագրերին մասնակցող հայցվորներն առայժմ չեն կարող առցանց հաստատել իրենց իրավունակությունը նպաստների համար, բայց կարող են օգտվել UI Online<sup>SM</sup> համակարգի շատ այլ հնարավորություններից: